

ԿՐՕՆԱԿԱՆ

ՊՄԸՆԻ Ս. ԽՈՐՀՈՒԹԻՒՆԻ

(Հարունակոթիւն *).

Ժ.

ՀՅԱՆԱՏԵՍԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑՅՈՒՆ ՊՄԸՆԻ ՊԼԴԻՐՈՒԹԻՒՆՆԸ:



այսատանեաց ս. Եկեղեցին հաստատուած է քրիստոսի քրիարար վարդապետութեամբ, նորա խորհրդաւոր արարուցութիւններն ևս պէտք է ծագեն անսպառածու այդ վարդապետութեան սկզբունքներից: Պատկիր ս. խորհուրդ է և պատկապրութիւնը խորհրդաւոր սրբազործումն, ուրեմն և նորա հիմունքը պէտք է սուրբ լինի. եթէ պատկադրութիւնը արարողութիւնը հակասէ Աւետարանին, եթէ արարողութեան սկզբունքին հակասէ գործնական վարդապետութիւնն, երկու գէպքումն էլ կլուծուի այդ ս. խորհրդի նշանակութիւնն ու երջանկացուցիչ ներդորմութիւնը:

Արդ՝ պատկադրութեան միջոցին ասւումէ. «վասն այսորիկ թողց՝ այր զհայր իւր և զմայր իւր, և երժիցէ զհետ կոնջ իւրօյ և եղիցին երկոքեանի մարդին մի: Արդ՝ զոր Աստուած զուգեաց մարդ մի մեկնեցէ»:

Եւ աղօթւումէ. «Էէր Աստուած յաւիտենական: որ զանզոյդս և զնախորշեալս զուգակցես միւս ւորութեամբ, և կապես անքակտելի օրհնեալ զծուայս և զաղախինս՝ քո»

Այնուշեան քահանան խոստովանեցնումէ նոցաւ որպէս զի եթէ ունեն հաւատութիւն և այնպիսի մեղքեր, որոնք նոցաւ անընդունակ են դարձնում այդ աստուածային օրհնութեան, զզջան և խոստանան ապաշխարել և քաւել: «Սախ քան պատիի թոյրութիւնը քննումնն, որ արտաքին արգելքներ (Հաստութիւն, անշափահաստութիւն և այլն) լինին, իսկ այժմ վնասարեր կարող են լինել նեղքին անուղղութիւններն, որոնք օտարաց-

նում: Հեռացնումնն մարդուն թէ Աստուածանից և թէ Սորա ս. օրհնութիւնից: «Երքին վերքերը կարելի է միայն խոստովանութեամբ, պատկուողների կամեցողութեամբ և անձնութիւնութեամբ բուժեր, ուստի և քահանան դիմումէ նոցաւ զարթեցնումէ, նոցաւիզջն և դրդում՝ զզջալ և մաքուր հոգով ու սրտով մտնել սիրով կապուած այն օրհնութեան տակ որ արժանաւորներին երջանկացնումէ, իսկ անարժաններին՝ իրեւ տկար սեօթների՝ պայմանակցում: Այստեղ արգէն ապագայ բախտաւորութեան կամ անբախտութեան պատճառն ինքեանք պատկուողներն են:

Յետոյ քահանան դիմումէ գէպի նոցաւ ասելով, «Տեսէք որդեակը՝ աստուածային հրամանեաւն և կանոնիք ս. հայրապետացն եկեալ էք ի ս. եկեղեցին պատկիլ օրինօք ի սուրբ ամուսնութիւն: Աստուած զձեղ միաբան սիրով պահեսցէ, ի խոր ծերութիւն հասուցէ: և անթառամ պատկին արժանացուցէ: Ապա տեսէք, որ աշխարհիս վերայ պէտապէս փորձութիւնք կան. թէ հիւանդութիւն, թէ աղքատութիւն, և թէ այլ ինչ նեղութիւն: Աստուած զձեղ յամենացն փորձութենէ յեռի պահեսցէ: Բայց Աստուածոյ հրամանն այս է, որ դուք երկոքեանդ մինչև ի մահ միմեանց օգնութիւն պարտիք առնել:

Այս խօսքերից յետոյ հարցնումէ ամուսնացնուներին՝ թէ արգեօք այդ բոլոր հանգամանքների մէջ համաձայն են իրար հետ սիրով ապրելու ըստ որում և համաձայնութիւն լսելով, շաբունակումէ:

«Այս բանիս վկայ Աստուած է՝ որ աներեւթապէս ի վերայ ս. սեղանցոյ բազմեալ է: Այլ և մեր պահապան հրեշտակքն այս ս. եկեղեցիս, ս. խաչ և ս. Աւետարան, գապը քահանայից և երամք ժողովրդոց. սոքա ամենեքեան վկայ լինին մի»:

Եւ երբ համաձայնուումէն, քահանան օրհնումէ. «Աստուած ի մէջ սոցաւ, և սոքա մի սասանեսցին, օգնեսցէ, սոցաւ Աստուած Որով և սկսումէ պահնչելի օրհնութիւնը. պատկուողք պարտաւոր են ուշագրութեամբ վերասլանալ այդ զեղեցիկ օրհնութիւնների հետ զէպի Աստուած և հայցել՝ որ Կաթողաւորէ, իւրեանց մէջ: Վիայն այդպէս կարող են անվրդով լսել:

*) Նախընթաց համար:

«Ուրախ լեռ բերկրեան հարսնացեալ առւրը և կեղեցի. պայծառացն զմանկունս քո յօրհնարանութիւն ծաղողին դշող լուսոյ ի քեզ Մայր Եկեղեցի»:

Եւ կամ մ' առնել ա. Գլքի պատուիրաններն որոնցով պարտաւոր են առաջնուրդուիլ ըստ որում և կարդացումէն այն բոլոր կրտորներն, որոնց համաձայն պէտք է լինի ճշշմարիտ Աստուածահամոյ պսակը, միշտ՝ «զոր Աստուած զուգեայ՝ մարդ մի՛ մեխնեսցէ» աստուածային խօսքի կրկնութեամբ, կամ մաղթելով. որ լինին «մ մարդին մասուրիւն հ դուռ հեռուն» սիրել զմիմեանս պարկեշտ վարուք, ամրիծ հոգւով առանց ամօթոյ, առանց լրկտութեան պատրաստ լինել ի դործս բարիստուրը և անարատ միաշունչ և միախորհուրդ:

Ահա թէ ինչ է բարեմարթում Հայաստանեայց ա. Եկեղեցին, ուստի և Անսնեայ Սարեկացին իրաւամբ ներբռումէ Եկեղեցին. «Թու ամուսնացելըցն յարդարիչ և պահպանակ պարկեշտութեան անրիծ և անխարդախ բարեկեցութեան և անարատ կենցազափարութեան»:

Հայոց ա. Եկեղեցին կապումէ այր և ինոչ մարդու սիրոյ կապով, միացնումէ և զնում նորա վրայ ա. խաչի լինիքը:



ԿԵՆՆԵՐԻ ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԵՆՈՆԱԴԲՈՒԹԻՒՆՔ:

Եկեղեցին միշտ ձգտումէ իրականացնել իւր սկզբունքները կեանքի մէջ, որ ժողովուրդը մօտենայ օրբստորէ Աստուծոյ արքայութեան տիպարին: Եւ որովհետեւ կեանքն իւր յառաջադիմութեան մէջ է և զնումէ շարունակ դէսի բարելաւ ացումն անշուշտ Եկեղեցու զաղափարական սկզբունքների և վարդապետութեան փրկարար ներբործութեամբ, հասկանալի է որ կինին իրականութեան մէջ պահպառութիւններ, որոնք եկեղեցին ձգտումէ հետքիցետէ վերացնել: Այդ նպատակով ունի նա պսակի օրհնութեան անբաժան հիմունքը

կազմող կրթող որոշ կանոններ, այդոնք Աւետարանի շաւղով արժանի են դարձնում ամուսնութիւնն աստուածային օրհնութեան: Ըստ այնու այդ օրհնութիւնը չեն կարող վայել նոքա, որոնք զուրկ են Աւետարանից բղիած այդ հիմունքներից և հակառակ են ընթանաւմ իւրեանց զործերով ա. Եկեղեցու սրբարար վարդապետութեան, չարժանանալով այդ օրհնութեան և աստուածային բարձրագոյն հեղինակութեան: ¹ Հայաստանեայց ա. Եկեղեցին ևս չի կարող հակառակ զործել իւր դաւանանքին և վարդապետութեան և անարժաններին յարմարուել ապա թէ ոչ՝ կողցնէ, իւր կոչումն և իւր նշանակութիւնն և ինքն ըստ ինքեան կուծուի, իսկ ժողովուրդը կուրբառեան կմատնուի: Աստուծոյ հակառակ ձանապարհի վրայ: Եկեղեցին փրկարան է, միայն եթէ նորա կարգ ու կանոններն անփոփօս են և աստուածային որպէս և են, ըստ որում և իրական կեանքը պէտք է հետզհետէ հետթարկուի նորա ներբործութեան և ըստ քրիստուին բարեփոխուի, որ երջանիկ լինի: Հետամուտ լինիքը ուրեմն Հայոց Եկեղեցու այդ կանոններին:

Ա. Գրիգոր Լուսաւորչի անունով մնացած 30 կանոնների մէջ ասուած է. «թէ ոք առեանդ արասցէ՝ պատկն անվաւեր լիցի, և պատկեալն ում կամփցի լիցի»: Այնպէս որ

. . . Քոկ եթէ ոք . . . գիւտ ինչ մարմնաւոր և կամ հնարք մարդկացին և կամ արուեստ երկրակեցաղ զատհմանեալ աւանդութիւնս առ ձեռակերտ Եկեղեցի վարկանիցի, և ոչ պարզ և առաւել կենաց և ակնկալութիւն աստուածային և Հոգւոյն Սրբոյ յայտնեալ լուսանորոգ նախագրութիւն . . . և միանգամայն ասել՝ գուռն երկնից և քաղաք Աստուծոյ կենդանւոյ և մայր կենդանեաց աղաս ի պարտեաց և Ճշգրիտ տեսակ կերպի երկակիս բանականի, իմանալին՝ խորհուրդ հոգւոյս, և շաշափելին՝ պատկեր մարմնոյս . . . զայնպիսի ոչ խոստովանողն մերժէ յերեսաց Երրոց Հայրն Ամենակալի ձեռն Բանին իւրոց էակցի, բարձեալ ի նմանէ և զաւանդ շնորհի Հոգւոյս փառակցի, փակեսցէ զգուռն կենացս այս առագաստի յանդիման նորին»:

Ա. Գրիգոր Նարեկացի. Հե, 15:

բանութեամբ զրուած պասկն ապօրինի է և
մերժումէ: Ասկ յետոյ.

«Ու վասն պոռնկութեան արձակէ զիին իւր՝
արձակեալ լիցի, բայց մի ամ պրեսցի:»¹

Ուրեմն մի տարի սրբուելուց (ասպաշխարք-
լուց) յետոյ իրաւունք ունի այլն ամուսնա-
նայ: Այդ լրացնումէ և միւս կանոնը, «Եթէ
ոք թողու զերկորդն և յառաջինն գարձցի ի թո-
ղեալն, 7 ամ ընդ յանցանացն ապաշխարեալէ, և
երկու ընդ օրինօք:» Այդ պահապէս: «Այս ոք զին
իւր թողու ի պատճառս աստուածաշուութեան,
նզովեալ եղցի ի կեանս և ի մահ:»

Փաքը ինչ յառաջ զնալով, տեսնում էնք
որ Դի գարի երկորդ կիսում Հայոց Եփեղե-
ցին աշխատումէր մաքառել կնաթող լինելու
գէմ: Փաւստոս Բիւզանդն ասումէ: «Եւ յա-
ւուրան ներսի Հայրապետին ոչ ոք իշխէր ի յմա-
նէ հանել կամ թողու իւր զամուսին յամենայն
երկիրն Հայոց, զոր միանդամ քուով կամ պատկա-
հարսանացն օրհնութեամբ առեալ էր, և ոչ այլ
առնել միւսանգամ իշխէր ոք համարձակել:»²

Արշակուան աւազականոցի մասին ևս պատ-
մելով ասում է: «Քազում վնասս առնէին և
անդ անկանէին: բազում կանայք զարս թողուին
և անդը անկանէին: բազում արբ զիւրեանց կանայս
թողուին: և այլոց կանայս առեալ անդը անկա-
նէին: 5

Ուրեմն ամուսնաթողներն ուղղակի չարա-
գործների թւումն էին և փախում էին գողե-
րի ապաստանարանը: Եսոյնը կրկնումէ: և լու-
րենացին: «աւանդառուք և պարտականք և ծա-
ռայք և վնասակարք և գողք և սպանողք և կնա-
հանք, և այլք այսպիսիք փախուցեալք անդը ան-
կանէին: և ոչ կայր նոցա այց և խնդիր:»³

Ուրեմն արդէն Դի գարումն երբ հեթանո-
սական սովորութեանց յիշողութեան տակ էր
ժողովուրդը, չարադրծութիւն և աններե-

1. Այս կանոնի սկզբունքի նմանութիւնն արտա-
յայտուած է և նիշյ—Կեսարիոյ (314-ին) ժեւ: Կա-
նոնի մէջ: բայց Ա. ամ ապաշխարեսցէ: ի
ձեռն ողորմութեան սրբեսցի և հաղորդեսցի օրի-
նացն, եթէ կամեսցի կին արասցէ, և կինն այլում
տան չիշխէ լինել մինչ կենդանի է այր նորա:

2. Տպ. Աւենետիկ. էջ. 229:

3. Անդ. էջ. 607:

4. Պատմութիւն. III, Ի.:

ի ոճիր էր համարւում ամուսին թողնելն:

Մանելով Եւ գարը տեսնում ենք որ ս. Աւ-
հակ կրամայումէ, քահանաներին. «Ուսուցէք
և զժողովրդական յամենայն անառ ակութենէ ի
փախչել ատեսցեն զշն աց ո զ ս. զգոզա
զ պ ո ս ն ի կ ս. զաւազակս. ամեններն մի հազոր-
դեսցին և մի ասպնջական լինիցին այնպիսեացն զի
մի եղցին և ինքեանք Ընդ նոսին որդիք կորստեան:

Ուրեմն պոռնիկներն ու շնացողներն որոշ-
ումէին Եկեղեցուց:

Ոքը ինչ յետոյ Հահազագիվանի սուրբ ժո-
ղովն ողբումէ ժամանակի խառնաշխիմք վի-
ճակն՝ ասելով. «Տ ցամաքել սիրոյն բազմանայր ա-
նօրենութիւն և լինէր յաճախումն Մծնէից
և այլոց չարեաց, կ ն ա հ ա ն է ի ց, պ ո ս ն կ ա ց,
գողաց, անձնակամաց ամենայն խոտորնակ չարագոր-
ծաց՝ յաշխարհիս Հայոց ի մէջ տանս թորգումայ:»

Ըստ որում և ժողովն ամեն միջոցների է
զիմում վերացնելու համար այդ չար սովորու-
թիւնը: Այս կարգազութիւն է անում այն հո-
գեսրականին, որ խառնումէր պոռնկական
ախտի մէջ: և վկայութեամբ իրքն ի յայտ ե-
կեցին մինչև որ ապաշխարութեամբ
քաւելը: Իսկ եթէ կնաւոր երէց գտցի ի պղծու-
թեան և ի պոռնկութեան և յայլ գործ չարեաց:
և սուուզեալ վկայիւք, քահանայութիւնն լուծցի, և
Եկեղեցւոց բաժնէ հեռացեալ լիցի. Յ. դրամ տու-
գանս տացէ և ի կարօտեալս բաշխեսցեն:»

Ապա եթէ կին երիցուն կամ սարիաւագին ի
շնութեան գացին՝ ընտրոց տէր նոքա լիցին. կամ
զեկեղեցին և զքահանայութիւնն ընտրեսցեն: կամ
զկինն. եթէ զքահանայութիւնն առցէ, զկինն
ի տանէն ի բաց հանցեն, և ապաշխարութիւնն խիստ
ի վերայ գիցին:»

Ուրեմն քահանան կարող է իւր պոռնիկ
կնոջ պահել միայն թէ, այն ժամանակ պար-
տառոր է թողնել քահանայութիւնն և հար-
կի տակ մանել: Ասկ ժողովրդականաց համար
կանոնադրումէ: (Գ. կանոն)

Եթէ ոք կին ունիցի, և պոռնկեսցի, և զկարգ
ամուսնութեան սրբութեամբ ոչ պահեսցէ, և զպր-
սակն զոր առ ի ձեռն քահանային ի ս. եկեղեցւոցն
ի գլուխ իւր ընկալաւ և ապա առ ոսն ե-
հար, և զօրհնութեամբ ամուսնութիւն զոր Աստուած
ետ նոցա՝ պղծութեան կոխան արար, ի շնութիւն
անկաւ, և ի պոռնկութիւն, և ի հանգանակս արբե-

ցութեան, զայնպիսին կշտամբեսցեն գլխաւորքն գանհեք, և բանիք օդտակարօք և յեկեղեցւոյ ի բաց մերժեսցեն, և տուգան կալցին յեկեղեցի, և ընդ կառաւեալս բաշխեսցեն, փոխանակ զի անարդեաց զեկեղեցին, և զայն օրչնութեան պըղծեաց, թէ աղասէ և դան չէ մարմ հարկանել՝ ի տուգանն և յապաշխարութիւնն յաւելցին, Ա. գրամ կարստելց, Բ. տարիս յապաշխարութեան զաղծութիւնն այլ մի ևս գործեսցէ, ապա մացէ յեկեղեցի և ընդ ընկերս խառնեսցին:

Թարձեալ (Պ. կանոն) Եթէ ոք զիին թողցէ զորդւոց մայր առանց բանի պունկութեան, և կամ թէ արատ ինչ չ'ոք ի մարմնի չիցէ, այլ որ եթէ այրն շնաբարոյ իցէ, և այլում ակն եղեալ իցէ, դատաստանս այս լիցի, զորդիս և զառւն և ըզկեանս և զչողն և զջուրն և զամենայն ինչ բաժանեսցին հասարակաց, զէկւն կնոջն տացեն, և կնոջն եթէ կամք են այր ի տուն ածել՝ յինքն համարձակ անցէ, զրաժինն կալցին և զարբունի հարկն ողջ արասցեն, և այրն որ եթող՝ Է. ամ ապաշխարեսցէ, և յեկեղեցի տուգան տացէ, թէ աղասէ Յ. գրամ թէ շնական՝ դանալի իցի, և Ճ. գրամ յեկեղեցի տուգանեսցի, փոխանակ օրչնութեամբ զամունութիւնն խոսելոյ, Ապա եթէ մինչդեռ ի պաքարին և ի տուգանի իցեն, և կին որ յանդգնեալ կնաթողին կին լինի, և ամ մի չիցէ անցեալ, յայտ եղէ թէ զոռաշին կինն նա ետ թողուլ կալցին զիինն և յուրկանոց տացեն, տարի մի աղասցէ գոտեացն, եթէ աղատ է յուրկանոց չերթայ, Ճ. գրամ տացէ ի գոտիսն... *

Այնանման սոսկալի պատիճների է ենթարկում և ամուլ կին արձակողին: Ընդ սմին նախընթաց կանոնին պէտք է աւելացնենք և մի ուրիշն, որ է այս. (Զ. կանոն).

Եթէ կին ոք յառնէ ելանիցէ՝ կալցին և անդրէն յայր իւր տացեն, մանաւանդ զոր վարձանօք իցէ վարձեալ, և ոչ բողարար թէպէտ և վաճառեսցէ, թէպէտ ի յաղախնոթիւն կալցի, եթէ կամք իցեն հոգեոր և բարի խրատու և սիրով կալցեն: Ապա եթէ այրն շարաբարոյ իցէ, կամ պոռնիկ, կամ հանգանակող և արբեցող, կամ այլ ինչ խեղական, գանիւ և խրատու կշտամբեսցեն զայրն, և հնազան, գեցուսցեն զերկուին, եթէ աղատ է տուգանօք և խրատու զայրն ի կարգ ածցեն: ապա թէ գիւրափոխեսցի այրն, կին պաշտեսցէ զնա:

Այս կանոնները, մանաւանդ Պ. և Զ. որոնք հրամայումն ամեն միջոցներով ուղղել ամու-

սիններին, պարզապէս ցոյց են տալիս որ Հայոց Եկեղեցու և Հայրերը մերժումն պատկի լուծան կարելիութիւնը: Վերևի երկու կանոնների վերջում ևս ասուած է, Յր զորդւոց մայր թողցէ, կամ զամուլ առանց բանի պոռնկութեան կամ այլ արատոյ, առն և կնոջ պատուհան, տուգան և ապաշխարութիւնն կանոն և առհման այդ կացցէ: Աստ որում ուղղել և միայն ուղղելն է և ժաղավի սկզբունքը, գորա համար են դրուած բոլոր խառնութիւնները և յարուցած գժուարութիւնները:

Բայց կայ պասիկ, որ անվաւեր է համարւում: Ի. կանոնը խօսելով առեամպման վրայ, աւելացնումէ: Ապա եթէ երիցու ուրուք գաղտն պակի երեալ իցէ առանց հօր և մօր աղջկանն երէցն զբահանայութիւնն չիշել պաշտել և պատկի զոր ետ անվաւեր լիցի:

ԺԲ. և ԺԳ. կանոններն անվաւեր են համարում և այն ամուսնութիւնն, որ հակառակ է չասութեան կանոնին, որի մասին յետոյ պէտք է խօսենք: Այն կանոնը զրեթէ բոլոր կանոնադրութեանց մէջ լիկնուում է, այնպէս որ դրուած արդեկըների գէմ պատկարը բութիւնը չի կարող ինքն ըստ ինքեան վաւերական համարութիւն:

ԱԵրսէս Բ. ի (546?—556) անունով ևս կան 43 հատ պատմական կանոններ, որոնց մէջ գտնումնենք թէ անվաւեր պատկիների յիշատակութիւն և թէ հետեւեալ մի կանոնը.

Ա. ասն այնոցիկ որք զպոնիկ կանայս թողուն, Ա. ամ ապաշխարեսցեն և կին արացեն, և կինն առն շիշխէ լինել: Իսկ յետոյ Ա. ասն որ զիւր կին թողու և այլ առնէ, և ապա գառնայ յառաջինն, Ա. ամ ապաշխարեսցէ:

ԱԵԼ և. Ա. ասն կնոջ որ ընդ արամբ է և շնայ, թէ թողցէ զպութիւն իւր, Ե. ամ առ գրանն Գ. ընդ օրինօք ապաշխարեսցէ:

Ա. յատեղից արդէն տեսնումնենք, որ պոռնիկ կնոջ թողնողը պէտք է նախ ապաշխարի և ապա ամուսնանայ. իսկ եթէ շնացողն ուղղուի, դարձեալ պէտք ապաշխարութեամբ սրբէ իւր սրբութիւնը: Առաջին կէտը տեսանք և վերև:

Ապաշխարանքի վրաց խօսելով յիշենք մի

* . Ճես. և Նիոյեսասրոյ ԺԲ. կանոնը:

քանի ուրիշ կանոններ ևս: Ա. Գ. Լուսաւորչի վերոյիշեալ կանոնների մէջ կարգումնեկը.

Այ մին կռւան իցէ և մին երկեակ, Բ. ամ արտաք և մի ընդ օրինար:

Խակ Աերսէս Բ.-ի կանոնի մէջ՝ Ա.ան որ մին կռւան է, և մին երկեակ, և զուղին. Գ. ամ ապաշխարեսցեն:

Ա.ան որ ընդ երկու քեոց պառնիի: և ապա զմին կին առնէ: Ժ. ամ ապաշխարեսցէ:

Ա.ան որ յառաջ քան զհարսանեն շնան և կին առնէ: Գ. ամ արտաք և և. ընդ օրինօք ապաշխարեսցէ:

Ա.ան որ շնայ և զնոյն կին առնէ: Գ. ամ ապաշխարեսցէ:

Զէ պարտ զկռւանս ոյրեաց ամուսնացուցանել և ոչ զայրիս կռւանաց զի աննման է:

Յովհան Ամաստասէրը կանոնադրումէ.

Խակ զերկեակսն նոյնպէս պարտ է ըստ առաջին կարգին՝ միջնորդօք և խօսնականօք հաւանեցուցանել յերերաց յօժարութեամբ, և Եկեղեցոյն և քահանացիցն օրհնութենէն ընդունել զնշան զուգաւորութեան իւրեանց. իսկ եթէ որ ոչ այսպէս այլ յառաջ խանձեսցին և պղծեսցին առ իրեարու զայնպիսիսն ի բաց մեկնեսցին ի միմեանց, և զնացելու զկանոն և զսահման ի վերայ գիցեն: Խակ եթէ ոչ առնուցուն յանձն մեկնիլ ի միմեանց յետ Ժ. ամի ապաշխարութեան ողորմութեամբ և արտասուօք արժանաւորեսցին խառնիլ յեկեղեցի Շատու ծոյ:

Հապա և երրորդ անգամ ամուսնացողների համար որ անրարեպաշտութիւն է համարւում կանոնուած է.

Աերսէս Բ.-ից. Ա.ան երրորդաց որք զուգին, եթէ թողցեն, Ժ. ամ արտաք և և. ընդ օրինօք Եկեղեցիոյ: *

Վիտն կամուղիկոսից. Երրորդացն զուգութիւն խառնակութիւն է, պղծագործ շուրջիւն անքաւելի յանցանք. եթէ ապաշխարութեամբ կամին ջնջել զմեզս, նախ որաշեսցին ի միմեանց խպառ. ապա Եղիցին արժանի ապաշխարութեան. և քահանայ որ զուգութեան նոցա պատճառ լիցի՝ լուծցի և նղովեսցի: *

Քացի վերոյիշեալ ապաշխարական գեպքերի, օրոնցից հաւատացողը կամաւորապէս սըրբուելով միայն կարողէ իրապէս վայելել պը-

սակի օրհնութիւնը, աեւնումնենիք՝ որ պսակն արգելուած է նաև կոյսի և այրու և երրորդ անգամ այրիացածների համար: Կ. Մանապէս արգելուամէ, անչափահամների ամուսնութիւնն որպէս յիշումն թէ ս. Աւհակի, թէ Աերսէս Բ.-ի իի (Ծանայ ս. ժողովի) և Շնորհալու կամուններն ըստ որում և իւրաքանչիւր պսակ պէտք է անպատճառ ամուսինների փոխագարձ համաձայնութեամբ կայանայ:

Լուծման վերաբերմամբ մի կանոն ևս կայ ամուսնի գերութեան (կամ աքսորանքի) պատճառով այդ Աերսէս Գ. Շնորհի Ե. կանոնն է.

Այլ վասն մերոց մեղաց՝ յորժամ աշխարհս գերեցաւ ի թշնամեաց՝ բաղում արք և կանայք ի գերութեան էին. նոցա ամուսինքն առանց վարդապետի հրամանի, կանայս առին, և արանց եղեն: Ա.ան այսպիսեացն սահմանեցաք այսպէս, թէ յառաջ քան զէ. ամն՝ մինչ զուգակիցն ի գերութեան էր: և նոքա յանդգնութեամբ այլ ամուսին՝ առին այնպիսեացն ամուսնութիւն ի պոռնկութիւն է, և գան և պատուհան կրեսցեն. յընչից և ստացուածոց նոցա հրամայեցաք առնուլ վարդապետաց: և յաղքատըս բաշխել, և զնոսա զատուցանել ի միմեանց և ապաշխարել է. ամ. Խոկ է ամին եթէ ամուսինքն դարձեալ լինին ի գերութեանէն. անդրէն հրամայեցաք դառնալ յիւրաքանչիւր ամուսինս. ապա եթէ ոչ կալցին զոր առինն, և նոքա որ դարձանն օրհնութեամբ այլ կանայս առնեն, և այլ արանց լինին. և կրկն ապաշխարութիւն ի վերայ գիցեն. Խոկ որ համբերեւացն զէ. ամն առցէ օրհնութեամբ առանց տուգանաց և պատուհանի, և կրկն ապաշխարութիւն ի վերայ գիցեն:

Ուրեմն լուծւումէ և այն ամուսնութիւնն որ պսակադրուելէ գերուած ամուսնուց յետոյ եօթը տարուանից առաջ: Խոկ եթէ ժամանակը լրանալուց զինի պսակւումն, պէտք է ապաշխարեն, ըրովհեաւ զործը դարձեալ ծանր է անսիրութեան ապացոյց՝ քանի որ արտաքրուած ամուսինը կենդանի է:

Ապօրինի պսակադրութեան անվաւերականութիւնն և արձակման վերաբերմամբ խիստ կանոնադրութիւնը ճանաչումէ, և ս. Աերսէս Շնորհալին, որ զրումէ առ քահանայս թըլթի մէջ. Մի և կնաթող ոց արանց, կամ այրաթու-

ւուցիցից պսակի արարութիւն ևս չունի Հայոց Եկեղեցին:

* Հմատ. և Արդյկեսարիոյ Թ. Ժ. Քարոզի Պ. կանոնները:

զայ կանանց առանց կանոնական հրամանին դիցէ
ոք պատկ զի մի լուծջիք դուք ի քահանայական
կարգէ՝ ըստ կանոնաց և եղեալ պատկն քականեացի,
և եթէ բանանան, և ոչ բաժանին ընդ պոս-
նիկն համարեալ լիցին. որոնք Եկեղեցուց մերժ-
ուումնեն:

Այլ և Պահպացէն և զհրամայեալ օրէնսն ի
Տեառնէ՝ որ յադապս առն և կողջ անբաժանելի
զուգաւորութեան. զի բաց ի բանէ պոռնկութեան
և որ այլ ևս են ի կանոնս ո. Հարցն զրեալ պատ-
ճառք՝ այլովք իւիք մի արացէ բաժինս . . . զի
թէ որ արձակէ զին իւր և արացէ այլ շնայ. ըստ
բանին Քրիստոսի, ապա և արձակեալն ընդ նմին
զոր արձակեաց՝ շնութեան մեղօքն պատճիցի, *

Դիարձեալ. Մի որ ի քահանայից ի բանութեանէ
բանաւորաց առանց կամաց առն և կողջն պակ դի-
ցէ . . . Զի պատկն այն անհաւատառ է և լուծանելի,
և պատկագիրքն ոչ առանց պատճոց:

Վերջապէս միշտումէ, մի հանդամանք ևս,
այն է երր մի ամուսինը հեթանոս է: Այդ
մասին Պօղոս առաքեալն ասումէ. Իթէ ոք
եղբայր կին ունիցի անհաւատ, և նմա հաճոյ իցէ
բանակել ընդ նմա: մի թողցէ զնա: Եւ կին որ ու-
նիցի զայր անհաւատ, և նմա կամ իցէ բնակիլ
ընդ նմա: մի թողցէ զայրն. Զի սուրբ է այրն ան-
հաւատ կնաւն . . . Ապա եթէ անհաւատն մեկնեա-
ցի, մեկնեցի, զի ոչինչ հարկ ի վերայ կոյ եղ-
բայրն կամ քեան յշոյնիսի իրա: քանզի ի խաղա-
դութիւն կոչեաց զմել Ըստուածու:

Այս այն գէաքի մասին է, որում անհա-
ւատ ամուսիններից մեկը քրիստոնեայ է դառ-
նում: Քրիստոնեան պարաւոր է պահել քր-
իստոնէական հրամանը, մինչդեռ հեթանոսը
պարտաւոր չէ և եթէ թողնէ ամուսնուն,
քրիստոնեայ կողմն ազատ է վերսալին պա-
կուելու: Այդ կոտրի բացարձութիւնը տալին
է Արքիս Յնորհալին, ² ասելով որ պատուի-

րուած է կմնանոց հնապանդ լինել այլ և ան-
հաւատիցն (արանց) և պագչութեցն և ապստամբիցն
ի բանէն ճշմարտութեան: Եւ նմա կամ իցէ բնա-
կել ընդ կնոջն քրիստոնէի, մի թողցէ զնա: ըստ
առաքելական նրաստոն այլ բարի կար-
գաթեամբ ընդ նմա կալով համեստ գնացիուք շա-
հել զնորա փրկութիւնն:

Խակ հեթանոսի հետ պատկուել արգելուած
է Հայաստաննեայց Եկեղեցու կանոնապրու-
թեամբ: Այդպիս Ներսէս Բ-ի Փիր. կանոնն
ասումէ. «Ասան որ զհեթանոս կին առնէ: կամ
լինի առն չար է մանաւանդ եթէ յանհաւատո-
թեան կան մնան. եթէ թողցէ կամ մեռցի անհա-
ւատ: Փեւ ամ պաշխարեցէ, և զնունդոն ածի-
ցէ ի հաւատու:

Ամասուանդ Արքնի ՓԱ. կանոնը. «Քահանայք
պատուէր արացեն արանց և կանանց և գտերաց
նոցա՝ զի ոչ արացեն ընդ հեթանոսի զուգութիւն՝
զի չէ ամուսնութիւն: այլ անօրէն և պիղծ խառ-
նակութիւն: զի զի՞նչ բաժին կայ հաւատացելոցն
ընդ անհաւատին: զի չար է քան զշութիւն և որ
գարշագոյնն է քան զշութիւն անբանական յան-
ցանք :

Արբեմն հեթանոսի նաև այլագաւանի * հետ
Հայի ամուսնութիւնն արգելուած է բացէ
ի բաց, քանի որ սիրոց և զգացմանց միու-
թիւն չեն կարող ունենալ և հաւատացող
շիներով չեն վայելիլ Հայոց եկեղեցու օրհ-
նութիւնը: Առանց հաւատքի՝ օրհնութիւնն
ոչինչ է և սրբապղծութիւն է անհաւատի
վրայ խորհուրդ կատարելը: ²

*. Այլագաւանի հետ պատկուելն արգելուած է
491 թուի Ա.աղարշապատի ու Գւնայ ս. Ժողով-
ների նորմականութիւն. Աւատանէս. Ա, Էջ 80. 86. 136.
Մոլո. Կաղանկատուացի Ա, Խէ: Տես. և Յովհան
Քմաստաւէրի Խթ. և ԼԲ. կանոնը:

1. 1823 թուին Ա.աղարշապատի գուքսն իրաւունք տու-
աւ քրիստոնեաներին և Հրէից՝ իրար աղջիկ տա-
լու: Գեօմէն լսելով սարսափել է և ասել որ ե-
թէ իւրեանց հոգաոր տեսչապետը բնաւորութիւն
ունեցող մարդ լինէր, պէտք է այն բոպէին հրաժա-
րուէր և շնչունէր այդ օրէնքը. զի եթէ անհա-
ւատը մտնէ և հաւատացողի հետ շնորհ վայելէ, այլ
ևս զգացմունք և բարոյականութիւն կմնայ ամենա-
լաւ քրիստոնեայի մէջ անդամ:

2. Տես. Մատթ. Է: 6: Ընդհանր. Էջ. 81—82:

*. Ընդհ. էջ 304.

1. Ա. Կորնմ. Է: 12:

2. Մեկնութիւն Կաթուղիկեացց. Ա. Պոլիս. 1826
էջ. 291. 292: Հռովմէական Եկեղեցին բացէ ի բաց
մերժումէ լուծելու չնարա որութիւնն: այլ Ճանա-
չումէ միմիայն ժամանակուոր բաժանումն: Մինչեւ
անգամ եթէ մի ամուսինն այլագաւան է և թող-
նումէ հետանում իւր կողակցից: վերջինիս իրա-
ւունք չէ տալիս ամուսնանալու: քանի որ թողողը
գեռ կենդանի է:

Ա երոյիշեալ բոլոր կանոնների սկզբունքները զեղեցկապէս ամփոփուած են կոստանդին ԱՅԻ ԺԵ. կանոնում որ է այս.

Առաւել չան տարցին եպիսկոպոսը և քորեպիսկոպոսը՝ զպոռնիկոս, զշացողս և զհմայս և զամենայն յանցուորոն՝ երկրուղիւ գեհենին ի գարձ ածել իսկ զանդարձն՝ մարժնաւոր պատոհասիւ և հոգեորաւ խրատել և տուղանել, մանաւանդ զայնպիսին որ այր և կնօջ մէջ մացեն, կամ բոզ ունիցին կին, կամ առելութեան պատճառաւ թողուն զկանայս առանց բանի պառնկութեան. զայնպիսիս առանց խղճի անողորմ խրատեցեն տուղանօք. . . .

Բոլոր ասածներից շատ պարզ երեւումէ, որ Հայաստանեայց ս. Եկեղեցու սկզբունքն է՝ ամեն միջոցներ զործ զնել և ուղղել մեղաւոր կողակցին. ոչ մի պատճառ չի կարող քակտել օրինաւոր ամուսնութիւնը բացի մահից. Միայն թէ պսակն անվաւեր է, երբ ապօրինի է, երբ զբուած կանոններին հակառակ է:

Ա կայն վերև տեսանք, որ կան ասպաշխարանքով բաժանուածներ. ուրեմն ո՞ն է ծշմարիտ եղակացութիւնը:

Ա. ՏԵՐ ՄԵՔԵԼԵՑՆ:

(Կը շատուակուի)



Ա ՆՉ ՊԵՏՔ Է ԿԵՐԴԱԾ. ԵՒ ՊԵՏՄԵԼ

ԵՐԵԽԱՆԵՐԻՆ.

Ամենայն հուանականութեամբ իւնդանական վեպը*, ոչ միայն առանձին անհամաների, այլև սոցա քաղաքակրթուած խըւրերի մէջ մեծ և ինքնուրոյն գեր է խաղացիւ Եւ արդորեւ գրականութեան այդ ռիւրի մեծ և կրթական նշանակութիւնը անկարելի է ուրախալ եթէ մինչեւ անգամ խնդր

* Այնպիսի վեպ. որի մէջ գեր են կատարուած գլխաւորապէս կենդանիներ.

միակողմանի անսակէտից նայելու լինինք, որ նա մարդու և ոյլ էակների մէջ մի առընչական յարաբերութիւն է կապում. շարժում արթնացնում է մարդու միոքն ու զգացմ. Ե՞նքները, Նկարագրումէ նոցս փօխագարձ յարաբերութիւնները որով և մարդը մանկութիւնից զիսկցում և զգումէ, որ Նախախնամութեան անսահման անօրէնութեամբ իւր և ամբողջ արտրուծական բնութեան մէջ մի ազգուցական կապսկցութիւն է հաստատուած; Խոկ գեռ ևս մանկութեան օրօրոցից զգալ և գիտակցել որ մարդը միայնակ յէ աշխահում: Որ նա մի ընկերական էակ է լնդարձակ հասկացողութեամբ, ոչ այլ ինչ է այս, եթէ ոչ մի անգնահատեկի երախորիք, մի երկնային պարգև, որ նոյն խոկ մարդու մէջ մարդու երջանկութեան համար բարեբեր և արգաւանդ հող է պատրաստում: Կենդանական վէպի համար անհրաժեշտ է և կենդանի խօսք: Բայց աչա մանուկը հետզիտէ անում, զարգանում: Հսունանումէ: Զեքեաթների մէջ յանկական միտքը հրապարակ և յափշտակող կենդանիները՝ խորամանկ ազուէսըն ու երիշոտ նապաստակը, ոսկեփետուր թռչուններն ու սիրուն այծեամները, անտառի գայլերն ու արիւնուուշտ ցին այլ ևս գագարում են զբաղեցնել հասունացած երեխայի միտքը առաջուայ նմանւ Նա սկսումէ աւելի ու աւելի հետաքրքրուել նոյն խոկ մարդկանց առօրեայ կեանքով և անցեալով, նոցա փօխագարձ յարաբերութեամբ, կենդանղավարութեամբ և գործերով: Ոյլօրաբար այդ ժամանակ երեխայի համոր համդէս է գոտիս մանկական զիսկաղնական վիպասանութիւնը հնդկական, յունական և ոյլ աղգերի հերոսական վէպերի նմանութեամբ: Այսուղ գըլխաւորապէս զեր են խաղում այնպիսի մարդ զիկ և այնպիսի գործեր, բնութեան այնպիսի տեսարաններ և երեսութեան որոնք կամ գէթ որոնց մանկամանութիւնները գոյութիւն չեն անեցել երբէք և կամ միանգամին հիսու են իրականութիւնից: Այս շըլանում հետ բրբիր ը ոյց տակաւին մանկական